

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ Տ. ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱԲԱՋՅԱՆԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱԲԱՋԵԱՆԻՆ ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ ՌՂՋՈՐՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Բաքու

Աստուծոյ ողորմութեամբ մեր Առաքելական Մայր Եկեղեցին նաև մեր օրերին նուիրուած է հայ հաւատացեալ ժողովրդի հոգևոր բարոյական դաստիարակութեան գործին, միշտ հաւատարիմ Սուրբ Աւետարանին ու մեր լոյս աւանդներին:

Մեր այս գրով ուրախ ենք Ձեզ նշանակելու առաջնորդական տեղապահ Ադրբեջանի հայոց թեմի, կանոնական բոլոր համապատասխան իրաւասութիւններով:

Վստահ ենք թէ Դուք, տիրախնամ թեմիդ հոգևոր սպասաւորների և եկեղեցիների վարչական մարմինների հետ ձեռք-ձեռքի տուած, պիտի ղեկավարէք թեմի եկեղեցական գործերը, ի միխթարութիւն հայ հաւատացեալների:

Ձեզ պատուէր ենք տալիս նաև բանի և գործով ջանք չխնայել աւելի ու աւելի ջերմացնելու համար եղբայրական աւանդական սիրալիր յարաբերութիւնները ադրբեջանցի և հայ ժողովուրդների միջև:

Ձեզ, սիրելի Հայր Սուրբ, մաղթում ենք մշտատև եռանդ ու Սուրբ Հոգու ներշնչանքներ, որպէսզի լիակատար արդիւնաւէտութեամբ ղեկավարէք Ձեր խնամքին հանձնուած հայոց եկեղեցիները:

Ձեզ և Ձեր գործակիցներին և ձեր ժողովրդին Մեր հայրական սէրը, Մեր հայրապետական գնահատանքը և Մեր օրհնութիւնը:

«Այսուհետև եղբարք, ողջ լերուք, հաստատուն կացէք՝ միխթարեցարուք՝ միաբան լերուք՝ խաղաղութիւն արարէք. և Աստուած խաղաղութեան և սիրոյ եղիցի ընդ ձեզ» (Բ Կորնթ. ԺԳ 11—12), ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 14 հոկտեմբերի
1981 Փրկչական ամի,
և ի տուժարիս Հայոց ՌՆԼ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
ՀԱՐ. 1682